

ՊԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12	Ձր
Տարեկան	6	"
Վեցամսեայ	15	"
Արսասահմանի համար տարեկան	8	"

Սակերիկայի համար	3	Տր.
Տարեկան	1.50	"
Վեցամսեայ		"

Ծանուցումն տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սակերիկ է. երեքին առջին անգամներու համար 20 0/0 զեղչ կրոյ:

Վասնայի համար մոսկ 10 սակերիկ

ՉԱՐՈՒՄ

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՏՆԵՐԻ ՔԱՂՈՒՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆՈՒԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՎԱՐՆԱ

Նամակ և գրամ գրելի նմանաբան համար յիսն .

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արսասահմանի համար մոսկ
(20 ՍԱԿԵՐԻԿ)
Պուշկարիոյ համար մոսկ
(15 ՍԱԿԵՐԻԿ)

Գրութիւնք եւ չին տրուիր

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ՐԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՆՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՄԻԱՆ ՀԱՅԻ

Իշխան Գալիցիոյն և Պիլիպէ Իրենց յիմար և շարամիտ ծրագիրը մարին առաջարկած միջոցին, ինչպէս հաղորդում էր Լ'է-նոպէն, թղթակիցը, կարծել են որ ուստահայերը ոչխարային համակերպութեամբ լուռ հանգիստեանն պէտք է մնային հայ եկեղեցու կառավարի աւագակային յափշտակութիւնը առանց զլխի ցաւի պէտք է տիրանար հայ եկեղեցիներէ հարստութեան: Բայց իրականութիւնը եկաւ ուստահայտակ օտար ցեղերի այդ դահիճներին հակոցնելու, որ ուստահայը իր իրաւունքները, նոյն իսկ ֆինլանտացիներէ աւելի ըմբոստ սխրոխտ կերպով ուզեց պաշտպանել:

Այսօր հեռագրական թելը ամեն օր լուրեր է բերում կովկասեան այսինչ և այնինչ քաղաքներից, ուստահայերի նոյն իսկ զէնքով գլխադրութեան մասին:

Մի օր էջմիածնում, միւս օր Ալեքսանդրապոլում, երրորդ օր Երեւանում, ու այսպէս շարքով իր ֆիլիզում, կարսում, Բաղուում, Գանձակում հայ ժողովուրդը քարերով, ատրճանակներով, բրնձով է գլխադրում Պիլիպէ և Գալիցիոյ գործիքներին, որոնք լպիրշութիւնը ունէին երեւակայնութիւն հայութիւնը մի փայտացած դիակ է և չի զգայ ամբողջ ազգութեան հասցրած այդ նախասիրի ծանրութեան շափը:

Շատ հաւանական է որ այդ գլխադրութիւնն էլ նպաստաւոր հետեւեալ շունենայ. ընդհակառակը կարելի է որ Գալիցիոյ այդ առիթից աւելի օգտվի Յարին համոզելու որ ուստահայերը իրապէս ուստ պետութեան կազմից բաժանվելու տրամադրութիւններ ունեն, որի մասին ուստական շօվէն ու ազտոտ մասուր իր գլուխը ունենալով անօթ:

Վրէժիան տարիներէ ի վեր փողահարում է, և ուստ կտաւ վարութիւնը աւելի խիստ միջոցների դիմէ ազգայնական այդ աստիճանի գիտակցութեան հասած ուստահայերին աւելի ճնշելու համար: Բայց սպառաշուն գալիք այդ գլխադրութիւնները չեն կարող պատճառ լինել որ այսօր ուստահայը իր իրաւունքները պաշտպանելու գերի մէջ թերանայ և Գալիցիոյն նման սրկայ շօվէնների առջեւ իսկապէս ոչխար ներկայանայ. մանաւանդ երբ աչրի առաջ ունենանք թէ ամեն շարիք ունի և իր բարի հետեւեալները, եթէ շարիքին ենթարկվողը միանգամից շարիքի ծանրութեան տակ չէ խորտակվում, ու ընդհակառակը փորձվում միջոցներ է ձեռք առնում ապագայում նոյնանման շարիքների ազդեցութիւնը չեղարացնելու աստիճանին հասցնել:

Մի ուրիշ յօդուածով մենք կը խօսենք թէ ուստահայերը այս փորձութիւնից ինչպէս կարող են օգտուել, որ նպատակաւոր լինի ամբողջ հայութեան համար:

ՎԱՐՇՈ

ՎԻՆԵՆԱՅԻ ՄԻԹՈՒՐԵԱՆՅ ՄՕՏ

Արագագնացը հեւալով ձգեց Չուիցերիան, անցաւ աստրիական սահմանը, Մուս բարով դուրս գեղեցիկ Չուիցերիա, ես քեզ չպիտի մոռնամ, դու երկիրներու երկիրը, որու ուստակապական դաշնակցական խաչի հովանին տակ ազատութիւնը ունեցանք և բեղմնաւոր պլանտի է բերքը, պտուղը քաղաքակրթութեան, գիտութեան և լուսաւորութեան: Մուս բարով մայր Հելվեցիա քու լեռներով, քու լճերով... Սահմանէն մէկ օր և մէկ գիշեր և ահա կը գտնուինք մի պատկանելի և հոյակապ մայրաքաղաքի առջեւ. դա Վիննան է, Այցելուի առաջին գործն է տեսնել Ս. Ստեփաննոսի եկեղեցին, ազգ. խորհրդատունը. համալսարանը, թատրոնը և թանգարանները: Վերջին ներս լաղկացած են երկու մեծ շէնքերէ զէմ գիմսը, որոց մէջտեղ կը գտնուի հրապարակ մը զարգարուած

աւագաններով, հաւերժահարներով, նիւֆէներով, Բարձրէն հրապարակին վրայ կիշխէ Մարիա-թէրէզիա, Հաբսբուրգեան տան վերջին ժոտանգը: Ես բազմած է վեհօրէն գրանիտայ գահի վրայ, շրջապատուած կայսերական զօրականներով և իր նախարարներով: Շատ հարուստ են վիշննայի թանգարանները իրենց պարունակութեամբ: Հետաքրքիր այցելուէն հոն կը գտնէ հին և նոր գեղարուեստի ներկայացուցիչներու մի ծոխ հաւաքածոյ: Մասնաւոր ուշադրութեան արժանի են եգիպտական մուսիաները, գերեզմանները, սեպագիր արձանագրութիւնները, Նեկոսի երբեմնի փայլուն քաղաքակրթութեան պիւրճախօս վկաններ:

Վիշննա մեծ և գեղեցիկ քաղաք է, զարգարուած արձաններով, սիւներով, կամարներով, տեսնելու դեռ շատ անգիր կան, բայց այնչափ հայտնի կը քաջէ ուրիշ մի կէտ: Վիշննայի շքեղ մեծութեան մէջ հայերն ալ ունին իրենց արժանաւոր ներկայացուցիչը, դա Միլիթարեան մեր հայրիւր վանքն է, եւ մեր քայլերը կուղղուին զէպի Միլիթարեան թընգաստէ:

Այս փողոցի ձախ կարգին վրայ կանգնած է մի հին և պատկառելի շէնք, արտաքին տեսքով ոչ այնքան փառաւոր, բայց անուամբ հրապուրիչ ամէն հայի համար. Փայտեայ մեծ դուռը կը բացուի, մեր առջեւ կելլէ մի ծերունի գերմանացի:

— Վիր զինդ Այմէնիէր ունդ վոլէն գի կո՛գրէ գաւցիտն պէղուխէն (Մենք հայեր ենք և կուզենք միաբանութիւնը այցելել):

Նա մեզ կառաջնորդէ ընդունելարան, ուր մեր առաջ կելլէ մի երիտասարդ և փառազէմ վարդապետ, հայկական նուրբ և գեղեցիկ տիպ մը. մեզմեծ միեւնոյն ժամանակ գիտունի մը լուրջ ու կորովի գիմազծով: Մարդ ստաշին վարկեանէն կը համակրի իրեն և կը սիրէ զինքը:

— «Հանդէս» ի խմբագիրը ո՛ւր է, բարեւներ եմ բերել իրեն:

Վարդապետը կը ժպտայ, որովհետեւ նոյն ինքն է «Հանդէս Ամսօրեայի խմբագիրը» — Հայր Թովմաս Կէտիկեան:

Իրար հետ ծանօթանալէ յետոյ, Գերապատիւը սիրայօժար յանձն կառնէ մեզ ցոյց տալ միաբանութեան հաստատութիւնը:

Ահա՛ ճաշարանը, մի ընդարձակ սրահ, որու երկայնութեան վրայ շարուած են սեղաններ ընծայեցու աշակերտներու համար — թուով այժմ 27 հոգի, վերջ՝ սրահի լայնքին վը-

րայ գիտեղուած է մի ուրիշ սեղան Աբրահօր եւ վարդապետներու համար: Ճաշի առին միաբաններէն մին կը կարդայ Ս. գրքէն կամ հայոց պատմագիրներէն կտորներ: Ճաշարանին ճակատը կայ մի մեծ նկար — Յուսուիր ունկնդիրներով: Աւստրիոյ կայսր և կայսրուհին այցելած են հայոց վանքը, տեսած այդ պատկերը և գնահատելով անոր գեղարուեստական արժէքը նկարչին տուած են ազնւութեան աստիճան:

Ասկէ կերթանք տպարանը: Հսկայ մեքենաներու երկար շարք մը ձգուած են մի ընդարձակ աշխատանոցի մէջ վերէն ի վար: Ասոնց վրայ կը գործեն մօտաւորապէս 30-40 քանուրներ և բանուորակներ: Տպարանը ունի ամէն լեզուէ տառեր, կընդունի ամէն կողմէ պատուէրներ: Հայերենէ զատ հոն կը տպուին թերթեր և գիրքեր եւրոպական զանազան լեզուներով: Մամուլ տակէն նոր դուրս եկած են «Հանդէս» յաջորդ տարուայ կողքերը Յարգելի խմբագիրը ծնողի մը գուրգուրանքով կը խօսի իր ուսումնաթերթին վրայ: Անոր կողքերը նոր շրջանին աւելի գեղեցիկ պիտի ըլլան, կը մնան նոյն պատկերները, բայց կը լինին աւելի վառ և վերը կապոյտ երկինքի «Հանդէս» զիտական գնահատելի ծառայութիւնները ամէնուս յայտնի են. յայտնի է նաեւ անոր մեծ արժանիքը: Նա կրնայ արջիլ եւրոպական ամէնալուրջ գիտական հանդէսներու հետ. բայց այդ ծառայող և պարունակութեամբ, այդ մաքուր տպագրութեամբ և աշխատակիցներու խումբով եւրոպական թերթ մը խմբագրական մարմնոյն կը բերէ մեծ հասոյթ, մինչդեռ «Հանդէս» իր սեփական ծախքերը չի կրնար գոցել:

Որքա՛ն ցանկալի էր, որ մեր գիտական ամենալուրջ թերթը ունենար ռազմաթիւ բաժանորդներ և ելլէր այդ վիճակէն, Բաժնեգիրը տարեկան 10 ֆրանք է, այսինքն այս օրինակ մը թերթի համար շատ չնչին գումար մը:

Գրաշարները տեղացիներ են, բայց անոնք գիտեն հայերէն կարդալ: Կը մօտենամ մի փոքրիկի, որ իր առջեւ առած է հայերէն ձեռագիր մը:

— Հապա գուք հայերէն կրնա՞ք կարդալ:

— Այո, պարոն, կը կարդամ:

— Բայց չէք հասկնար:

— Ոչ, պարոն, չեմ հասկնար: Տպարանէն կերթանք թանգարանը, Առաջ կայցելենք գիտական բաժինը,

յետոյ պատճառներով Այստեղ մեզ կը ներկայանայ հայ ժողովուրդը իր պատմական զանազան շրջաններու մէջ, Արշակունիս հարստութենէն սկսեալ մինչև Ռուբինեաց վերջին թագաւորի՝ Լեւոն Զ. ի սկիզբն եւ պղծեաց զրամները, հայկ. ձեռագործեր, յիշատակարաններ շարուած են հոն քրոնիկական կարգով: Ետտ հարուստ է գիրքերու եւ լրագիրներու հաւաքածոն, զորս Զ. Պիլէզիքեան այնքան խնամքով դասաւորած է: Այս սրահներէն միոյն մէջ գրուած է Զ. Այստեանի Ֆրանց Եօզէֆ կայսր յորթեանի առթիւ պատրաստած մի հարաշակերտը՝ Անիի մայր եկեղ. ցոյն մի նմանութիւնը: Ասոր վրայ զետեղուած է Զ. Այստեանի մի մեծ երկրագունդը՝ հայաստան: Իր յորթեանի առթիւ սարքուած ցուցահանդէսը այցելած է կայսրը եւ տեսնելով Զ. Այստեանն՝ առաջին անգամ անոր մօտեցած, իր հետ սիրալիր կերպով թօսած եւ շնորհակալութիւն յայտնած է:

Միտիթարեան շէնքին կից է նաեւ մի փոքրիկ եկեղեցի, որու զարդարանքը չէ լատինական, այլ զուտ հայկական: Հոն զետեղուած են վարդանի, իր դստեր Եւջանի, Սահակ Պարթեւի, Մեսրոպ Մաշտոցի, Ներսէս Ենուոհայեցիի պատկերները: Եկեղեցոյ մէջ զետեղուած է Հայր Այստեանի մարմինը զմոտած: Թէեւ պետական օրէնքը կարգիչ այդ բայց Միտիթարեան հայրիւր թոյլտուութիւն եղած է իրենց սիրելի արքայազնը թաղել իր աղօթատեղոյն մէջ:

—Այտընեանի մահը մեծ կորուստ մըն էր հայ ազգի համար:

—Այո, մեծ կորուստ մըն էր այդ մահը նաեւ միաբանութեան համար:

Հայր եկեղեցեան մեր ուշադրութիւնը կը դարձնէ նաեւ եկեղեցոյ ուրիշ մասերու վրայ ու կուտայ բացատրութիւններ:

—Եկեղեցական արարողութիւնը լատիններէն կը կատարուի:

Հարցումս, զարմանք կը պատճառէ:

—Ինչո՞ւ Լատիններէն, մենք լատիններ չենք, այլ հայեր եւ մեր արարողութիւնը կը կատարուի նոյնպէս հայերէն ինչպէս էլ միածնի մէջ:

Միտիթարեան հոյսերը կը կազմեն երբեմն հանդիսաւոր թափոններ, զգեստաւորուած հայկական տարազով կը հաւաքուի մեծ բազմութիւն, կը լան զինուորական պատիւներ:

Եկեղեցիէն կերթանք ուրիշ մէ դահլիճ, որու առատազիւ անկիւններուն վրայ զեղաբերուած են անուններ. ինչպէս Բաֆֆի, Գամառ Բաթրիպա, Արշան եւն:

Ասով մեր այցելութիւնը վերջացած է: Ընդունելարանի մէջ Գեր. Զ. Կէտիկեանի հետ կարճ եւ սրտազին խօսակցութենէ մը յետոյ հրաժեշտի ողջոյն կառնենք եւ կը մեկնինք քաղցր տպաւորութեան տակ:

Մարգարէտնի

ԿԵՆՍԱԿՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ
Պաշտօնային տպագրւած Սոս. Անդրանիկի թիկնաւոր Ը. Ներսիս Ասրազանի Մտաւորութիւն

Դէմքեր կան, որոնց տեսքը ամբողջ գրութեան մը քարոզութիւնն է լուսնու, այնչափ բարրատուն կը դանձը անոնց դիմագիծը, արտաայտութիւնը յաճախ հոգեւոյ մարդուն: Այս մարդիկ առաջին անհարկով իսկ ձեռք կը հասկոտեն ինչ անկեղծ՝ անշահախնդիր՝ պաշտօնասէր՝ խղճամտ ու կարող՝ անկուր՝ աննուաճ մարդու մը դիմաց կը գտնուէին: Երբ սակայն արաքին առաւելութեանց՝ պարթեւ հասակին՝ գրաւիչ զէմքին՝ խոհուն անհարկին ու լուրջ շարժումներն ընկերացնեն պիտի ճախարհու մը եւ արտաբերող ու նեղատես միտք մը, կրնա՞ք երես կայել թէ ո՞ր աստիճանի օգտաշատ շրջաններու բոլորում մը եղած ըլլալու է իրենց թովանդակ կեանքը:

Համառօտ գիծերը այդպիսի կեանքի մը պիտի գաղափար մը տան Պուլկարիոյ ապագայ Առաջնորդին անձնական արժանիքին նկատմամբ: Եւ տարեկան այս եպիսկոպոսը, որուն սպիտակափստ սլիքը սակայն չեն կարծեցներ թէ ԿՅԵ անցուկ լուրջ, այնչափ արբակեցնող ու մաքուր ապրած՝ ու պահած է իր կոյրովն ու արթնամտութիւնը, յաջողութեանց անակնկալ եւ երկարածից շարք մը թողած է իր ետին:

Դպրոցական կեանքէն իսկ ցոյց տուած է տարբերելու, հասարակ ծնողքէ այլ հասարակ զգացումի ու տափակ տաղանդի մը տէր չմնալու ընդունակութիւնը, անանկ որ իր ծնած թաղին Սամաթիոյ վարժարանին մէջ եղած շնորհաւոր սովորէ երբ, երբ արտակարգ բան մը կը տեսնեն

թաղեցիք ոմանք այս տղուն վրայ, կորուցնէ Մայր-վարժարանը դնել ի Գում-գափու. ուրիշ առտու իրիկուն անդադրում երթուաւ մը կունենար մանուկն Ասրանեան անտրտունը: 1860ին Մայր-վարժարանը իր առողջ հունձքերէն մին կրնէր յանձին շրջանաւոր դասարանի մը, որոնց մէջ Ասրանեան պատանին գերիվեր կը հանգիստանար: Եւ այս յաջողութիւն իր թաղեցիք Սամաթիոյ Գեորգեպոլսոյ Անդրանիկեանի ականջը հասնելով կը կանչէ զինքն յԱմասիա որուն Առաջնորդն էր Ա Մարգարէտն Զարիսիան Ս. Աստուածածնի վանքին մէջ երեք ամիս առ ոտս իւր՝ կրօնական հրահանգութեանց մէջ մարգարէն ետք 1863ին կուսակցութեանց ականջութեան լուծին տակ կառնէ այս կրակոտեց երիտասարդը սարկաւազ ձեռնարկելով, անանկ որ այժմ 1903, քառասներորդ տարեկարծն է որ կը բուրդ Ասրանեան Սրբազան իր հասարակաց ու հոգեւոր ծառայութեանց սկզբնաւորութեան:

Հնուց կարգադրուած էր որ վարդապետական ձեռնարկութեանց կեդրոն վարչութեան կրօնական ժողովը իր հաւանութիւնը տար ընծայելուն անձին իսկ վրայ քննութիւն մը կատարելէ ետք: Եւ, ուստի Ասրանեան սարկաւազ 1865ին եկա Պուլիս եւ քննութիւնն յաջողութեամբ անցնելէ ետք ձեռնարկութեան վարչապետի թագնակեցան Պողոս Պատրիարքին իսկ ձեռքէն առած՝ վերադարձաւ իր Հոգևոր ծնողին մօտ, որմէ Ամասիոյ թաղին Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն մէջ արեւոյ ձեռնարկուեցաւ:

Երկու տարիները որ յուշիկ սանցան այս ձեռնարկութեանց ետք որով հայ եկեղեցականութեան վրայ փայլուն ներկայացուցիչ մը աւելցաւ. Մեյուհազարդ Կեդրոց եպիսկոպոսի թեմն ու թիկնաւոր զարծաւ ներսէս վարդապետ եւ միայն անոր խաղաղական մահը զինքը Պոլիս նետեց, ուր իր քաջողութեւ պաշարն ու զայն օգտակար ընծայելու ձիրքերն յանչափ հոշակ գտան որ Սամաթիոյ բազմահայ թաղն փութաց իր երբեք ի Մայր-եկեղեցիին քարոզիչ կարգել, պետք զգալով մանաւանդ հրկիզել երկսեռ վարժարաններ վերադարձնելու առթիւ անպիտի համակիր ու պիտի թաղանքը մի մը, որպիսին էր ներսէս վարդապետ: Այս խափուեցան ալ, Կարոզիչը իր երիտասար-

դական առաջին թափովը ձեռք զարկաւ եւ զլուխ հանեց, պարզեւելով թաղին փառաւոր երկու շէնքեր քարայն, երկսեռ մանուկներու համար:

Մինչեւ 1873 ամսն եկեղեցական ու ազգայն հանդէս կամ պաշտօն եւ կամ արարողութիւն պիտի վայելէր ներկայութիւնը եւ մասնակցութիւնը ներսէս վարդապետին կամ աշխատութեանց կամ քարոզութեանցը ճամար եւ այս բան աչքի զարկաւ. Բերայի բազմահայ ու մեծափարթամ թաղին, որ լսելոյն հոգեւոր Ներսէս Պատրիարքին դիմեց խնդրելու Սամաթիոյ քարոզիչը իրենց երեք եկեղեցիներուն (Բերայի Ս, Երրորդութիւն, Ներսէս Ս. Յարութիւն եւ Բանկալ-թիի զերեզմանատան Ս. Լուսաւորիչ) համար որուն կրօն. ժողովը տուաւ իր հաւանութիւնը եւ ներսէս Պատրիարք, որ աչքին պէս կը սիրէր զանի՝ տուաւ իր հաստատութիւնը: Կոյն տարին էր, երեսպիտան ալ ընտրուեցաւ Ազգային Ընդհանուր ժողովին ու անկէ ետք կեդրոն. Կրօնական ժողովին երկու տարին անգամ մը մէկ փորձ՝ ներսէս քաջաքարոզ եւ հեռատես քնական անգամ զարծաւ ներսէս վարդապետը, որ վանօրէից խորհրդոյ եւ զանազան Մասնաժողովներու շարունակ կոնգրակցելու ալ եւ իր նախանձախղիքի պարզ ու անկեղծ շնչովը կ'ազդէր միշտ:

Այսչափ աշխատանք ու բազմակողմանի զբաղմունք արգիւր չէին ըլլար սակայն լուրի իր մտաւոր զարգացումն ալ յառաջացնելու եւ սոց միջոցին իրեն այցելուներէն շատեր կը պատմեն խորաթափանց թարթափութեւ մը անգիտեցնէ հանդէսներու եւ կրօնական ու ընկերական հարցերու նկատմամբ այդ լեզուով երկասիրութեանց մէջ: Ուստի իրեն այցելողը միշտ զարգափար մը առած՝ նոր բան մը ուսած կը բաժնուէր այս համակրելի եկեղեցականէն: Լաւ երաժիշտ ալ է եւ քիչ չափ համոտեւ ըրած Հայկական ձայնագրութեան, զոր դիւրացուցած է իր ձայնին մեղմորդ ու գաշն ելեւէջները: Հեղինակութեամբ կերպէր եւ զլինքն իրեն հարազատ. եւ յաջող ներկայացուցիչը հայ եկեղեցական երգեցողութեան կարծիքով էր որ թուէր վեր կողմը գտնուող մէջ վէհանցի շէյխերը ամենքն սով արեւելեան ձայնագրակառուէր կերպովն Բերայի եկեղեցիին մէջ իրենց թուանկովը ցուցադրելու լսելու համար՝ մանաւանդ Մեծ պատ-

ՓՇԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ
(7)
ՆՈՒՆԻՐ Ս. Զ. — ԻՆ
ԳԼՈՒՆ Բ.

Մի երկու անգամ դուռը բախելուց յետոյ՝ նա բացվեց եւ շէմքում երկայ մի պատանի գիմնագիտ:

— Հօրեղբայրդ տանն է:

— Հարցրեց Եւտտեանը:

— Այո, բայց մենակ չէ՛ մօտը ուրիշ մարդիկ էլ կան:

— Վնաս չուներ, պատ-սխանեց Եւտտեանը ու առաջ անցաւ: Երան հետեց եւ Պետրոսը:

Երևում էր որ մեր պարոնները այդ տան հետ յաւ ծանօթ էին. նրանք՝ առանց այլեւայլութեան, մօտեցան այն սենեկին, որտեղից ձայներ էր լսվում, ու ներս մտան:

Սենեկում գտնվում էին երկու տանկահայեր, ինքք տան տէրը, եւ մի ուրիշ, շէրքէզի զգեստով երիտասարդ:

Տան տէրը մի միջահասակ, նիհար վախտ, բայց փայլուն ու սե աչքերով երիտասարդ, նախկին ուսուցիչ, այժմ մի միլիտանտէրի մօտ պաշտօնեայ, առանց ողջունելու տասց:

— Ո՞րչափ ուշացաք, ի՞նչ պատահեց ձեզ, ձեր սուներ շինվի, ժամադրութիւնից գրեթէ երկու ժամ ուշացել էք: Յոյսներս կտրել էինք մի պարոնների համբերութիւնը հոտու:

— Զբաղված էինք, եղբայր. ի՞նչ անենք, ո՞ր մէկին հասնենք վերջապէս ի՞նչ արիւք. ի՞նչպէս կարողացանք, տղերքը ե՞րբ ինչ ուղում գնալ: Զէնքերը պատրաստ են, Փող ճարեցիք: Արագութեամբ սարկեց Պետրոսը:

— Ամեն բան պատրաստ է, վրա բերեց տան տէրը, բայց փող չկայ: Որչափ դէտ ու գէն ընկայ մի քանի հայրիւր ուրբիլ չը կարողացայ ճարել, Բոլոր հարուստ ազգասէրներին կարմիրներին դիմեցի. մի բան չը գուրս եկաւ: Ուզեցի իմ երկու ամսական ուսուցիչ մի անգամից վերցնել. այդ էլ չեղաւ. մեր կառավարչը մի քիչ էլ բարկացաւ: Եղբայր, հոգար անգամ ստել եմ, էլի կասեմ՝ այս տեսակ յեղափոխութիւն չի լինի. ամենաչնչին գումարի համար անգամ ներսէս վրայ կը կրոււմ: Տես, ի՞նչ են ասում տղերքը: Վաղը մի խումբ գաղթականներ ուզւում են անպատճառ Մուշ վերադառնալ, եւ նրանց հետ շատ յորմար կը լինէր երկիր մտնել:

— Բայց որ փող չը կայ ի՞նչպէս գնան:

— Է՛հ, կարծես նոր բան ես ասում, մի քիչ արաքացած միջամտեց Եւտտեանը: Ես էլ գիտեմ որ յեղափոխու-

թիւնը առանց փողի չը լինի. բայց որ չը կայ ի՞նչ անենք. մի կերպ պէտք է ճարել: Ու դառնալով տանկահայերից մէկին, շարունակեց:

— Արշակ, պէնքերը ընդունեցի՞ր, քանի՞ հատ են եւ բոլորն է՞ք ուզում տանել:

— Ընդամենը 60 հատ են. Մուսիկի հրաշալի հրացաններ են. Ուզում ենք բոլորն էլ տանել, Հարիւրական էլ փամփուշտ կայ, Բայց առանց փողի ճամբոյ չենք ընկնի: մի քանի հարիւր ուրբիլ անհրաժեշտ է. մենք չենք կարող ժողովրդի վրա բեռ լինել. առանց այն էլ Մուշ ժողովուրդը տնտեսապէս քայքայված է. իրենց համար ուսուցիչ բան չեն գտնում ի՞նչպէս համակրել իրենց վրա բեռ եղող մարդկանց. շուտով կազմակերպութեան հմայքն էլ կը կորչի. եթէ նրա առաքելները մուրացկաններն պէս ներկայանան: Ա՜հ:

հոգ մէջ՝ հայ շարականներու ու երգերու այս մարմնացումը՝ ներսէս վարդապետը:

Այսպիսի գործն ու աչքառու մարդ չկրնար չարձագանքել իր համբաւ եւ Եւզոկիա առաջին անգամ բախտը կուսննայ զինքն իր արքեպիսկոպոսական աթոռին վրայ բազմեցնելու՝ առաջնորդ ընտրելով զԿար 1883ին, ճիշդ սաս տարի անընդհատ Բերայի պէս ազնուական ու բազմապահանջ թաղ մը գոհացնելէ ետք: Ներսէս պատրիարք որ՝ ըսինք՝ մասնաւոր յարում մը ունէր այս անձին մէկէ աւելի բարեմասնութեանց վրայ, զգալով թէ Եւզոկիայ չորս վանքերու վարդապետներուն իր հրահանգներն ու իր կոչման պարտականութիւնները լռելի ընել տալու համար Ներսէս վարդապետ ըստ օրինի ծայրագոյն իշխանութիւնը ունենալու էր, ինքնաբերաբար ծայրագոյն վարդապետութեան իշխանութիւնը էական համարեց անոր պաշտօնին կիրառութեան ու ներսէս Մ. վարդապետ միանգամ ընդմիջտ գաւառները մեկնեցաւ ու ալ անկէ ետք գաւառներն եղան իր գործունէութեան սպարէզ: ... Եւզոկիային վերջ Տրապիզոն զինք կը խլէ ուր իր սա՛ (սէրթ) մարդու մը համբաւը ձեռք զիմակը վար աննկով կարգ մը կեղծ ազգային ձեռնարկներու՝ եկեղեցիին դրամը ուտող ուրացողներու, վարժարանի յառաջգիմութեան արգելք եղողներու ուրոնցմէ մեծագոյնին Սիմոն էֆ. Յէթ վաճեանին կը կարգու առաջնորդարանի խառն ժողովի սրահէն ժողովականներուն առջեւ առօք փառօք դուրս հանել սարով եւ ժողովոյն ամենապատկարգելէն իբր եզական ուղղութեան տէր սղոյնուելով:

Որքէն պատրիարք որ իբնէ հանդարտաբար թոյլ ալ էր, իր խոտուածքին այս պակասը լրացնող եկեղեցական մը կը փնտռէր եւ գտաւ զՏ. Ներսէս Մ. Վ. զոր ձեռքի տակէ հրաւիրեց Պոլիս եւ քիչ ետք փոխանորդ կարգել սուլա իրեն՝ խառն ժողովին: Ալ դեպքանատուններու ինչպէս եւ միւս պատրիարքարաններու մէջ երես ձեռնկցնող մարդ մը գտած էր խառն ժողովը: Ներսէս վարդապետը ճիշդ ժամանակին հասաւ: Որքէն պատրիարքին պաշտօնավարութեան վերջին միջոցը ինչ անձեռնութեան յաղթեց, ինչպէս ձեռք առաւ ու գարձուց զեկը ամբողջ պատրիարքարանի գործոց: Այս միջոցին էր որ արժանացաւ հայրա-

պետական յայտարարութեան գրեւորութեան մը, օրհնութեան կոնդակի մը հետ վարդապետական ականակու լանջախաչ մը ընդունելով:

(Շարունակելի)

ՔԱՅ ՆՍՄԱԿ

Պ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Ի՞նչ է շէր արժեք ձեզ հետ երկար զբաղուել, բայց «Շարժում»-ի 549 լուի մէջ, ձեր պատասխանը մեր բողոքին չի համապատասխանելով, կ'ըստիպուինք կրկնել թէ ձեր դէմը չեն գտնուիր այն անձերը, որ կ'ակնարկէիք յօդուածի մէջ:

Պ. Մովսէս
Երբ ձեր դէմ բողոքեցինք, կ'ը կարծէինք թէ պիտի լսէք այդ անկեւ ձայնը և սխալնող մեծութիւնը ճանչնալով, պիտի զղջայիք: Բայց կ'ը ցաւինք որ վարձկան զինուորի մը շնորհիւ (որը ձեզ պաշտպանելու ստոր դերը հաճութեամբ ստանձնեց) հրապարակաւ ամէն ձեզ թափեցիք անձնինք բարոյական անկումէն ազատելու, և անվայել ածականներով ալ մեր անունը արատաւորելու: Բայց մենք այդ ածականները ձեզ կը վերադարձնենք, որովհետեւ անոնք ձեր անուան շուրջը յաւիտենական գափնիներ պիտի ըլլան:

Մենք պէտք չունինք ոչ փաստաբանութեան և ոչ ալ անվայել ածականներ գործածելու բանաձևին:

Պ. Մովսէս
Եթէ լուի ձեր անունը արատողներ ըլլայինք, կարծենք թէ փաստե՛ք չեն պակսիր, բայց ժամանակը չէ ատոնցմով զբաղուել: Երբ արտասովոր նորարարութիւնի մատնանշեցինք, պնտակալէ պարձկանը սովորականին կուզէ վերադարձ: Ընչու է թէ Գէմախյաներս 3-4 ֆրանքի նուէր կը տանէինք, միայն և միայն փաշային գլխաւորութիւնը

չահելու, (կարծեմ աւելորդ է բացատրել հոս սոյն կէտը) սակայն դուք երկրի մէջ ունէ վնասուող շահեր չունէիք, նոյն իսկ ձեռնարկային դոնացած է ձեզ գոյութիւն շնորհելը, ուրեմն ինչը կ'ստիպէր որ 125 ֆր. ի տուի մը նուրիք փաշային, միթէ այդ վարձուքնիդ չ'ապացուցանէր գաղտնի բարեկամութեան մը գոյութիւնը, ուրեմն մեր քնդատութիւնները չ'են: Վերջերս իմացանք որ տուփին արժողութիւնը 125 ֆր. գուցէ աւելի ալ ըլլայ:

Ձեր յօդուածի մէջ կ'ըսէք որ «թերեւս իմ գէմախյանները միայն 2 քեմախյաններ են» երեկ քանի մը պնակակեղծներէ վայելած յարգանքնիդ ձեզ իրաւունք կուտայ հպարտանալու, բայց դժբախտաբար այդ յարգանքները որքան ալ անկեղծ ըլլան ձեզ հանդէպ, պարզապէս ծաղրելի են: Նոյնպէս կը պահանջէիք որ իսկական անունով յայտնուինք, բոլորովին աւելորդ է:

Բողոքը արդար է:
Քեմախյան ազգային մը
Սեպ. 24 Սոֆիա

ՄԵԼԻՔԻՍԵՆԻ ԱՐԲԵՆՍԻ ԿՏԱԿԸ

Իզմիրի Արեւելեան մամուլը շարժաթիւթի մէջ կարգում ենք հետեւեալը:

Ինչպէս գիտէ հայ հասարակութիւնը, բարեկիշտակ Տ. Մելքիսեղեկ Արք. Մուրատեանցի մահուանէն յետոյ կտակի ձեւով թուղթ մը բերեան ելած է, որի մէջ իմ շիշալոց նուէր մը նշանակուած է ողբացեալ հօրս Մատթէոս Մամուրեանի շիրիմին շինութեան ի նպաստ:

Բայց՝
Նկատելով որ՝ Տ. Մելքիսեղեկ Սրբազան եթէ ուզէր, կրնար այդ նուէրն ընել իր կեղծանութեան և իր յօժար կամօքը:

Նկատելով որ՝ Տ. Մելքիսեղեկ Սրբազան շատ երկար միջոցներ ալ ունէր ինքնագիր կտակ մը պատրաստելու:

Նկատելով որ՝ Տ. Մելքիսեղեկ Սրբազան իր կենսաց վերջին տարիներուն մէջ հիւսնագութեան պատճառաւ, անկարող էր ունենալ իր մտային համակ պայծառութիւնը:

Նկատելով որ՝ կտակ մը վաւերական ըլլալու համար հարկ տես հրաժեշտ է վկայներու ներկայութիւնը:

Նկատելով որ՝ այդ կտակ անուանուած թուղթը թէև գաղտնագողի պատրաստուած և իր մահուանէ 12 օր առաջ ուրիշի ձեռքով գրուած, բայց կը կրէ 1 յունիս թուականը:

Նկատելով որ՝ կտակը շինողներն երկու անձեր են, որ կտակակալ ու կտակակատարներ են միանգամայն:

Նկատելով որ՝ հակառակ կտակային օրինաց արգէն նախապէս իրացուցած են մուրհակ և արժէթուղթեր:

Նկատելով որ՝ այդ թղթի մէջ գործածուած խել մը բառերն ևս կը մատնեն անոր շինծու հանգամանքը:

Նկատելով որ՝ այդ կտակ անուանուած ձեռագիրը վերէն ի վար զուրկ է օրինական ամենաթեթեւ տրամագրութիւններէն:

Այս և ուրիշ մի շատ նկատումներով խիղճս ու պատիւս չեն ներքը ընդունիլ այդ նուէրն, ուստի իսպառ կը մերժեմ զայն իբրև ներկայացուցիչ ժառանգորդաց ողբացեալ հօրս՝ Մատթէոս Մամուրեանի:

Խմբագիր - տնօրէն Արեւելեան Մամուլի՝
Մ. Մամուրեան Որդի
(Մշակ)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

«Կովքազ» լրագրում կարգում ենք. «Սեպտեմբեր 2ին, Բագրքազաբում, երեկոյեան մօտ 5

պատճառ դրամ պլտք է ճարել:
— Այո, պէտք է ճարել, միջամբանց Պետրոսը բայց ո՞րտեղից ճարել, Դրամ չեն տալիս եղբայր, հաղթականներին համար անգամ հաղթմի քանի բուրի են տալիս: Ամանք էլ առում են որ սկզբունքով դէմ են: այլեւս զենք անելու կամ մարդ զրկելու ժամանակ չէ, Պէտք է սպասել Եւրոպական յանձնարարութիւններին արդիւնքին:

— Սկզբունքով դէմ են... յորեր, կարծես Հայաստան հազարաւոր զենք են մտցրել և հազարաւոր կուտող մարդիկ են ուղարկել: և հիմա էլ դէմ են: Դրանք երբ չեն դէմ եղել: Առաջ չէին նաւաստում և չէին տալիս, իբր թէ հիմա էլ պէտք է սպասել թննութեան արդիւնքին: Սուտ են առում սուտ, զենքը հէնց հիմա է պէտք ժողովուրդին, Դեռ գաղթականութիւնը շատ չնչին է: վաղը կարող է նա

աւելի մեծ լինել: Երբ թուրքը կատաղի, երբ ժողովուրդը բողոքովին անպաշտպան մնայ, եթէ սյուսի մի փոքրիկ գաւառում եղած իրարանցման պատճառով են երկրից փախչում, վաղը աւելի շատ կը փախչեն: Սասունը եթէ զէնք ունենար, չէր կոտորվի: այն ժամանակն էլ դրամ չէին տալիս զէնքի համար:

Անպատճառ դրամ պէտք է ճարել: Այս խումբը թող գնա, նա կարող է և ուրիշներին համար էլ օրինակ լինել որ երկրից գուրս չը գան: Ես կարծում եմ ամեն ճիգ պէտք է թափել երկրից գաղթելու հոսանքի սողեւտները: Ամենակատար երեւոյթը այդ է: Այդ հոսանքը եթէ գրեցանայ, երկիրը բողոքովին կը դատարկվի: Թուրք կառավարութեան ուզածն էլ այդ է:

Աւելի տաքացած պատասխանեց Շեռտեանը:

— Ճարել, ճարել, բայց ինչպէս ժարել: միջամտեց տան սէրը, իր չոր ձեռքերը շարժելով:

Առաջ, երբ այս խնդիրները չը կային, ես իմ անունով կարող էի սրանից նրանից պարտք վերցնել: Հիմա էլ չեն տալիս: Ասում են որ հասկանում են թէ ինչի համար եմ ուզում: Մանաւանդ որ մի քանի հարիւր բուրլի դեռ չեմ վերադարձրել: տողները գիտեն որ այս գործի համար եմ վերցրել: Ինձ չեն նեղացնում: Բայց բացորոշ կերպով յայտնում են որ էլ ինձ դրամ չեն տալ:

— Բո ժամացոյցը քանի՞ բուրլի արժի, յանկարծ միջամտեց Շեռտեանը:

— Երկու հարիւր, պատասխանեց տան սէրը:

— Շատ լաւ, ժամացոյցը գրաւ կը դնենք: Ես էլ մի հարիւր յիսուն

բուրլի կը ճարեմ: Մի քանի հարիւր բուրլի կը լրացնենք: Սրանց ճամբու կը դնենք: յետոյ կը տեսնենք թէ ինչ պէտք է անել: Այսպէս խատաակութիւն չի լինի: Պէտք է լուրջ միջոցներ ձեռք առնել դրամ հայթայթելու համար: Եւ որքան շուտ, այնքան լաւ: Ես Եւրոպայի վրա ոչ մի հաւաստ չունեմ, Յանձնարարութիւնից էլ մի բան չեմ սպասում:

Հինգ հարիւր տարվան գերի ժողովրդները այդպէս շուտով և դիւրութեամբ չեն ազատվում: Ես վախեւում եմ որ մեր ժողովրդի գլխին դեռ շատ փորձանք պէտք է գայ: Իսկ նա ոչ մի կերպ պատրաստված չէ այդ փորձանքներին դիմագրաւելու և քիչ վնասով պրծնելու համար:

(Շարունակելի)

ժամին, եկեղեցու զանգու հրա-
ւէրով, տեղական մայր-եկեղե-
ցու գաւթի մէջ հաւաքվեց հա-
յերի նշանաւոր բազմութիւն:
Ստորկանութեան առաջարկու-
թեանը ցրվելու՝ ամբար պա-
տասխանեց քարեր և ատրճա-
նակներ արձակելով: Ատրճանակ-
ներ էին արձակուով մինչև ան-
գամ եկեղեցու պատուհաններին:
այս պատճառով էլ կանչվեցին
երկու հարիւրակ կողակներ և
Սալեանի հետեւակ զնդից կէս
րօտա: Ամբարը զօրքերին ևս
գիմարեց քարերով ու ատրճա-
նակի հարուածներով և մի և նոյն
ժամանակ պահվեց եկեղեցու
գաւթի քարեայ պարսպի ետեւ և
եկեղեցու մէջ: Այս պատճառով
էլ կէս-րօտան կրակ բացեց և
ամբարը, ժողովելով սպանված-
ներին ու վիրաւորներին, թագ-
նը վեց մայր եկեղեցու մէջ, որը
և շրջապատվեց զօրքերով: Ամ-
բարից ձերբակալվեցին 45 ան-
ձինք: Մնացածները ցրվեցին:
Գտնված և գրաված է շատ
զէնք: Նոյն իսկ եկեղեցու մէջ և
նրա սեղանի վրա գտնվեցին
վայր ձգած ատրճանակներ, լիք
և դատարկ փամփուռներ: Զօր-
քերից թեթեւ զնաւած են քա-
բերով մի օֆիցէր և շորս զինուոր
Սալեանի զնդից և սպանված է
քարերով մի նաւաստի «Գէօկ»
թէփէն զինուորական նաւից, որ
պատահամբ անցնում էր այստե-
ղից: Բացի դրանից զնաւած է
նաև ոստիկանապետի պաշտօնա-
կատարը: Ամբարի տուած զոհե-
րի թիւը գեռ ևս յայտնի չէ:
(Մշակ)

ՍՕՖԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԸ

Սօֆիայէն կը գրեն մեզ թէ
Տօքթ. Սիմօն Քիւչիքեանի ըն-
տրութիւնը իրեն ապօրէն բե-
կանուելէն յետոյ այս կիրակի
դպրձեայ ընտրութիւն տնջի ու-
նեցեր է և ուրախ ենք յայտա-
բարելու թէ գարձեալ յիշեալ
անձնատրութիւնը ընտրուած է
քուէներու ստուար լծածամանու-
թեամբ, հակառակ ընտրողական
ժողովին ձեռք առած անիմաստ
ու անհարկի սեղմումներուն: Մեր
համոզմամբ, սօֆիայաբնակ հա-
յերուն մէջ պատգամաւորական
փափուկ պաշտօնը ամէն նկատ-
մամբ յաջողապէս կատարելու
միակ ձեռնհաս անձը Տիար Քիւ-
չիքեան ըլլալով, կը յուսանք
որ ընտրողական ժողովը ալ լինու
փութկոտութիւնը պիտի ունե-
նայ անոր ընտրութիւնը վաե-
րացնելու:

Աւելորդ չենք սեպեր այս առ-
թիւ շեշտելու թէ Սօֆիայի պատ-
գակաւորը կարող է նպաստաւոր
ազդեցութիւն ունենալ առաջ-

նուգական ընտրութեան ելքին
վրայ, բուն մը զոր միայն բա-
ցարձակապէս անկողնակալ,
անկուսակցական ու միեւնոյն ժա-
մանակ վստահելի մարդ մը կը-
նայ կատարել, որուն անվերա-
պահօրէն կարենան վստահի
միւս քաղաքներէն ընտրուող
պատգամաւորները: Տիար Տօք.
Սիմօն Քիւչիքեան այս վստա-
հութեան արժանի մարդը կերե-
ւայ մեզ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կ. Պօլսէն Վիէնայի «Յայթա»
թերթին սեպտեմբեր 25 թուով
կը հեռագրեն:

«Հայոց Պատրիարք» Օրմաննան
Ռուսաց կայսեր իրմէ և 12 ե-
պիսկոպոսներէ ստորագրուած
խնդրագիր մը ուղղեց, որոյ մէջ
խնդրած է շնորհք բերել և հայ
եկեղեցական կալուածներու առ-
թիւ տրուած հրամանը հտ առ-
նելու:

— Վառնայէ Վեհափառին զը-
կուելիք հանրագրութիւնը մօտ
800 հօգի ստորագրեր են:

— Վառնայի պատգամաւորին
ընտրութիւն այս կիրակի տեղի
պիտի ունենայ: Արժանապատիւ
փոխանորդ հայրը՝ ինչպէս կե-
րբէր՝ ամեն կերպ կայնաստի որ
կիրակի ընտրութիւնը վերջա-
ցընել: Նայելով որ կարգ մը
մարդիկ զանազան երեքսայական
քայլեր կընեն զայն վախցնելու
համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ կիրակի Սօֆիա քա-
ղաքը սուգի նշաններով զար-
դարուած էր, որովհետեւ հոգե-
հանգիստ կատարուեր է սպան-
նուած Մակեդոնացիներուն հա-
մար: Եկեղեցիէն վերջը ժողո-
վուրդը սուգի թափոր մը կազ-
մելով անցեր է քաղաքին կա-
րեւոր փողոցներէն:

— Մակեդոնացիներէն պատ-
գամաւորութիւն մը ներկայացր
է նախարարապետին, հակնա-
լու համար թէ պուլկար կառա-
վարութիւնը վերջապէս այսու-
հետեւ ինչ գիրք պիտի բանէ
դէպի Մակեդոնական խնդիրը:

— Հռչակաւոր պետական գոր-
ծիչ Փրիզոր Նաչովիչ Պօլսոյ
Պուլկարական գործակատար նշա-
նակուեր է:

— Բնդղմադիր կուսակցու-
թեանց պետերը միասին ընտ-
րողներու կողմը ուղղեր են մօ-
տակայ ընտրութիւններուն առ-
թիւ, որովհետեւ պուլկար ժո-
ղովուրդին հրատէր կը կարգան
ամեն ճիգ թափել, ու պէսզի կո-
ռաւարութիւնը չկարենայ մեծա-
մասնութիւն յահիլ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Եւրոպական բոլոր պետու-
թիւնները՝ թէ Թուրքիոյ և թէ
Պուլկարիոյ կառավարութեանց
յայտարարած են, որ պատե-
րազմի տարադային իրեղմէ ոչ
մէկը ու է պետութենէ օգնու-
թիւն չի կրնար ստանալ:

— Սուլթանը պուլկար էրզաւր-
քը պալատ կանչելով առաջար-
կած է որ հովական թուղթով
մը ժողովուրդը հնազանդութեան
հրաւիրէ: Էրզաւրքը մերժած է
այդ առաջարկը իրագործել:

— Սուլթանը հրամայեր է խառն
յանձնաժողով մը կազմել Մակե-
դոնիոյ մէջ բարեփոխողները
իրագործելու համար:

— Թուրք կառավարութիւնը
աշտաւորութիւններ կը յայտնէ
ուղղակի Պուլկարիոյ հետ համա-
ձայնելով կարգադրել Մակեդո-
նական խնդիրը, սակայն աստ-
րիական և ուս կառավարու-
թիւնները ատոր կը հակառակին:

— Սուլթանը իրատէսով մը կը
հաստատէ, որ Մակեդոնիոյ մէջ
սերպ ժողովուրդ կայ:

— Պելկարաէն կը հեռագրեն
որ Մակեդոնիոյ մէջ գտնուող
թուրք զինուորները գրեթէ բո-
ւորովին մերկ են և շատ կը նեղ-
ուին վրայ հասնող ցրտերէն:

— Պօլսէն կը հեռագրեն, որ
պուլկար թրքական բանակցու-
թիւնները սկսելէն վերջ կը կար
ծուի որ այլ եւս Մանասթրէն
բէտիֆներու երկու չօրաբաժին-
ները Սարիանուպօլիս չը պիտի
գան:

ՅԲԱՆՍԱ

Պրանսական թերթի մը տուած
տեղեկութեան համաձայն՝ Պրան-
սական հայաստաններու գոմիթէն
մտայիբ է հոկտեմբեր 10ին Ռա-
բիլի մէջ Անգլիայի և Պրանսայի
հայաստաններու ժողով մը կազ-
մել: Այդ ժողովին նպատակը
պիտի ըլլայ Մակեդոնիոյ և Հայ-
կական սուզնապետներ վերջ
տալու համար ամենալաւ և արագ
միջոցը որոնել:

Անգլո-Ամերիկեան հայաստե-
րներու այդ ժողովին մասնակցե-
լու հաւանութիւնը արգէն ստաց-
ուած է:

ԱԶԴ

Կը յայտարարենք Վառնայի և ու-
րիշ քաղաքներու մէջ գտնուած ըն-
թերցողներու որ ընթերցարանիս մէջ
կը ծախուին հետեւեալ գրքերը և
պատկերները:

ԳՐԳԵՐ

Դիւցազնօրէն 1 Ֆր.
Ազատութեան ճանապարհին Ա. 30
Գ. 30

Ամբոխային տրամաբանութիւն	55
Ապստամբ Սասունը	20
Հայրենասէրի տաղերը	20
Հերոսը	20
Հայուհիներին	20
Ազատ երգեր	20
Մեծ առաւօտը	50

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Պետո (Պուլկ.) փոքր.	10
Կարօ (Ա. Չօրեան) մեծ.	50
Նշանաւոր հայ դէմքեր	1...
Ուրիշ քաղաքէ եկած յանձնարարա- կանները փութով կը կատարուին և զնոդներու դիւրութեան համար Պուլկ. նամակադրօյմ ևս կ'ընդունուի:	
Մօտ օրէն կը հասնին նաև «Պետո» ի (Պուլկ.), սեպեկէն-Սիւնիոյ ի, «Աղ- բիւր-Սերբուրի և «Պետո» ի (Վանեցի) մեծ պատկերները: Ը Օ Մնդ. հատը:	
Վարչապետ	
10 Սեպ. Վսոնա	Բարիկէն-Սիւ-
նիս Բնք.	Վառնայի

ԹԱՏՐՈՆ ԱԸՆԿՆԵՆԻԷ

Նախժտա հայ դերասանական
խումբը վաղը երկու պիտի ներկայա-
ցնէ ի նպատ խմբին դերասանական-
ներէն հաճի Յակոբի և Ե. Երամանի:
Իրնանի
Մշակատակ 5 արար:
Երգեր և պարեր օր. Գաթի-
նայի և Օր. Օլկայի կողմէն:
Հաճի Յակոբի և Երամանի կողմէ
Գեղ առնն
Նոյնպէս պիտի ներկայացուի
Մալախօ Քամ Հայրապետ
կատակախառն թատերախաղ 3 ա-
րարուած:

ԿԸ ՓՆՏՈՒՒԻ

Սարգիս Մխոյեան 35 տարեկան
(Պիթիսցի) կորու գրիգորի, 1896ին
ապրիլն ուր գտնուիլը յայտնի չէ, ի-
րեն ծանօթ, բարեկամ և կամ հաս-
ցէն գիտցողներ թող հաճին իմաց
տալ:
Մարտիրոս Մաշտոցեան Պիթ-
իսցի) մալ կոսն պօ,
բոռիյ նօ. 9 ի. Ասերիկա
եւ կամ խմբագրութեանս:

ՄԱՋԻ ՆԵՐԿ

ՀՐԱՇԱՍԻ ԹԱՋՈՂՈՒԹԻՒՆ
Դիւլեյ Գ. Ա. Ջարպիսեանի
Վառնա Պուլկարիս)

ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Տէր և Տիկին Գայանան կընդու-
նին թողաւոր հայ պատանիներու
կուսան անոնց հայկականին հետ
Ջուրիցիական ստոյլ դաստիարա-
կութիւն, կը պատրաստեն զանոնք
իրենց տարիքին և ընդունակութեան
յարմար դասընթացներու քաղաքիս
վարժարաններուն մէջ, կապահովեն
ընտանեկան խնամք և գոհացուցիչ
յաջողութիւն:
Մանրամասնութեանց համար անյա-
պաղ դիմել առ
Յ. Գայանան
47 Թաւանկերսրաս
Պալ (Սուլիզ)

ՕՏՎՈՐՈՒՅԿ

Мурадъ-Ераносянъ
Педатичча, Ваимность Варна